



Կարգապահական Գործ թիվ ԿԳ13-016
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
«03» սեպտեմբերի 2013 թ
ՈՐՈՇՈՒՄ Թիվ 32 ԿԳ/1-Ա

Անդամավճարի պարտք ունեցող 25 փաստաբաններին կարգապահական
պատասխանատվության ենթարկելու հարցը քննելու մասին

«03» սեպտեմբերի 2013 թ.

ք. Երևան

ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհուրդը, նախագահությամբ Պալատի խորհրդի անդամ Լիպարիտ Սիմոնյանի մասնակցությամբ Պալատի խորհրդի անդամներ, Սիմոն Բաբայանի, Գևորգ Գյոզալյանի, Մարտուն Փանոսյանի, Երվանդ Վարդյանի, Լուսինե Սահակյանի, Ռուբեն Հակոբյանի և Նելլի Հարությունյանի լսելով Լիպարիտ Սիմոնյանի զեկույցը, և ուսումնասիրելով թիվ 94-Ա/ԿԳ13-016 կարգապահական վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Պալատի գլխավոր հաշվապահը ներկայացրել է տեղեկանք, որով Պալատի նախագահին տեղեկացրել է, որ ինը ամիս անդամավճար չմուծելու հետևանքով 2013թ. հուլիսի 1-ի դրությամբ անդամավճարի գծով 45.000 ՀՀ դրամ և ավել պարտք ունեցողներին (թույլատրելի առավելագույնը 15000 դրամի պարագայում):

Պալատի նախագահի 02.08.2013թ. թիվ 94-Ա/ԿԳ13-016 որոշմամբ հարուցվել է կարգապահական վարույթ տեղեկանքում նշված հետևյալ փաստաբանների նկատմամբ.

Անդամավճարների պարտքեր 45.000 և ավելի հունիս ամիսը ներառյալ

h/h	Փաստաբանի անուն , ազգանուն	պարտք	արտոնագիր
1	Ղազարյան Սուրիկ Բախշիկի	55000	99
2	Հայրապետյան Վլադիմիր	55000	106
3	Մանուկյան Սաթենիկ	95000	145
4	Ավետիսյան Վարսիկ	45000	315
5	Ռամազյան Գրետա	48000	370
6	Հարությունյան Ենոք	56000	559
7	Զուրաբյան Գոհար	77000	665
8	Մալխասյան Սյուզաննա	45000	747
9	Պալյան Հրաչյա	50000	762
10	Սաֆարյան Տիգրան	45000	769

11	Կիրակոսյան Նելլի	45000	787
12	Թամրազյան Արարատ	92000	816
13	Գրիգորյան Լիանա	48000	892
14	Քիչմիրյան Հրայր	68000	946
15	Դավթյան Վաչե	45000	951
16	Ճուղուրյան Արամ	50000	960
17	Ստեփանյան Վարդան	50000	964
18	Մաթևոսյան Հռիփսիմե	48000	1055
19	Սուդյան Վարդան	62000	1098
20	Դալալոյան Վահե	45000	1183
21	Ավետիսյան Ռոբերտ	45000	1306
22	Պետրոսյան Հովհաննես	48000	1354
23	Ղազարյան Կարեն	45000	1358
24	Ղուկասյան Տաթևիկ	55000	1473
25	Պողոսյան Գրիգոր	58000	1525

Կարգապահական վարույթի իրականացումը հանձնվել է խորհրդի անդամ Լիպարիտ Սիմոնյանին

06.08.2013 թվականին Լիպարիտ Սիմոնյանի կողմից որոշում է ընդունվել կարգապահական գործը վարույթ ընդունելու և նիստի օր նշանակելու մասին: Նիստը նշանակվել է 2013 թվականի սեպտեմբերի 3-ին ժամը 18-ին:

Նիստի օրվա և ժամի մասին փոստային և էլեկտրոնային հասցեներով ծանուցվել են աղյուսակում նշված փաստաբանները:

Փաստաբան Ղազարյան Սուրիկին ուղարկված ծանուցման փոստային ծրարը ետ է վերադարձվել «ՀՀ-ում չի» նշումով, սակայն ծանուցումը ստացել է էլեկտրոնային փոստի միջոցով:

Փաստաբան Զուրաբյան Գոհարին ուղարկված ծանուցման փոստային ծրարը ետ է վերադարձվել «այս հասցեում չեն բնակվում» նշումով, սակայն ծանուցումը ստացել է էլեկտրոնային փոստի միջոցով:

Փաստաբան Թամրազյան Արարատին ուղարկված ծանուցման փոստային ծրարը ետ է վերադարձվել «ՀՀ-ում չի» նշումով, սակայն ծանուցումը ստացել է էլեկտրոնային փոստի միջոցով:

Փաստաբան Մանուկյան Սաթենիկին ուղարկված ծանուցման փոստային ծրարը ետ է վերադարձվել «այս հասցեում չեն բնակվում» նշումով, էլեկտրոնային հասցեի վերաբերյալ տեղեկություններ առկա չեն:

Փաստաբան Քիչմիրյան Հրայրին ուղարկված ծանուցման փոստային ծրարը ետ է վերադարձվել «տեղափոխված է» նշումով, էլեկտրոնային հասցեի վերաբերյալ տեղեկություններ առկա չեն:

Փաստաբան Ճուղուրյան Արամին ուղարկված ծանուցման փոստային ծրարը ետ է վերադարձվել «տեղափոխված է» նշումով, էլեկտրոնային հասցեի վերաբերյալ տեղեկություններ առկա չեն:

Փաստաբաններ Կարեն Ղազարյանի, Հրաչ Պալանի, Վլադիմիր Հայրապետյանի կողմից ծանուցումները ստանալու մասին ապացույցները՝ ետադարձ ծանուցման կտրոնները , չեն ստացվել:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.4 կետի համաձայն Փաստաբանը պարտավոր է էլեկտրոնային հասցե ունենալ և այն տրամադրել Պալատին՝ իր հետ կապ հաստատելու նպատակով: Փաստաբանի տրամադրած էլեկտրոնային հասցեով ուղարկված գրությունը կամ ծանուցումը համարվում է պատշաճ ծանուցում, նույնիսկ այն դեպքում, երբ փաստաբանը փոխել է այդ հասցեն և Պալատին չի նախազգուշացրել դրա մասին:

Կարգապահական գործի քննության ընթացքում պարզվել է, որ փաստաբան Ենոք Հարությունյանը գտնվում է բուժման մեջ և անհրաժեշտ է նրա մասով հետաձգել կարգապահական վարույթը՝ ստանալ նրա հիվանդության վերաբերյալ փաստաթղթերը, որից հետո անդրադառնալ նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցին:

Փաստաբաններ՝ Տաթևիկ Ղուկասյանը, Գրիգոր Պողոսյանը, Հովհաննես Պետրոսյանը, Վարդան Ստեփանյանը, Վաչե Դավթյանը, Տիգրան Սաֆարյանը մինչև 2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունեցած անդամավճարի պարտքը ամբողջությամբ մարել են մինչև 2013 թվականի սեպտեմբերի 3-ը:

Փաստաբաններ՝ Գրետա Ռամազյանը, Վարդան Սուդյանը, Վարդան Դալալյանը, մինչև 2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունեցած անդամավճարի պարտքը մարել են մասնակի՝ Գրետա Ռամազյանը 43.000 ՀՀ դրամ, որից հետո նրա պարտքը 2013 թվականի սեպտեմբերի 3-ի դրությամբ կազմում է 5.000 ՀՀ դրամ, Վարդան Սուդյանը 60.000 ՀՀ դրամ, որից հետո նրա պարտքը 2013 թվականի սեպտեմբերի 3-ի դրությամբ կազմում է 2.000 ՀՀ դրամ, Վարդան Դալալյանը 35.000 դրամ, որից հետո նրա պարտքը 2013 թվականի սեպտեմբերի 3-ի դրությամբ կազմում է 10.000 ՀՀ դրամ:

Փաստաբաններ՝ Գրետա Ռամազյանի, Վարդան Սուդյանի և Վարդան Դալալյանի պարտքի գումարը սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ կազմում է 15.000 դրամից պակաս:

Փաստաբան՝ Սյուզաննա Մալխասյանը 2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունեցած անդամավճարի պարտքը մարել է մասնակի՝ 45.000 դրամից 20.000 դրամը և սույն որոշման կայացման օրվա դրությամբ նրա պարտքը կազմում է 25.000 ՀՀ դրամ:

Փաստաբան Նելլի Կիրակոսյանը 2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունեցած անդամավճարի պարտքը մարել է մասնակի՝ 45.000 դրամից 25.000 դրամը և սույն որոշման կայացման օրվա դրությամբ նրա պարտքը կազմում է 20.000 ՀՀ դրամ:

Փաստաբան Լիաննա Գրիգորյանը մինչև 2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունեցած անդամավճարի պարտքը մարել է մասնակի՝ 48.000 դրամից 13.000 դրամը և սույն որոշման կայացման օրվա դրությամբ նրա պարտքը կազմում է 35.000 ՀՀ դրամ:

Փաստաբաններ՝ Սյուզաննա Մալխասյանի, Նելլի Կիրակոսյանի և Լիաննա Գրիգորյանի պարտքի գումարը սույն որոշումը կայացման օրվա դրությամբ կազմում է 15.000 դրամից ավելի:

Փաստաբաններ՝ Սուրիկ Ղազարյանը (արտոնագիր թիվ 99), Վարսիկ Ավետիսյանը (արտոնագիր թիվ 315) Գոհար Զուրաբյանը (արտոնագիր թիվ 665), Արարատ Թամրազյանը (արտոնագիր թիվ 816), Ռոբերտ Ավետիսյանը (արտոնագիր թիվ 1306), Հռիփսիմե Մաթևոսյանը (արտոնագիր թիվ 1055) կարգապահական վարույթի պարտքի մարում չեն կատարել:

Պալատի խորհուրդը կրկին հիշեցնում է, որ անդամավճարը հանդիսանում է Պալատի ընդհանուր պահանջմունքների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար անհրաժեշտ միջոց, առանց որի Պալատը չի կարող արդյունավետ կազմակերպել իր աշխատանքները:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի համաձայն. «Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար», 19 հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճար:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար, իսկ Պալատի Կանոնադրության 4.4.կետի համաձայն՝ Յուրաքանչյուր ամսվա անդամավճարի մուծումը կատարվում է դրան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:

Վերը նշված իրավանորմերի համաձայն՝ անդամավճարի մուծման ուշացումը հանդիսանում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17, 19 հոդվածների, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 կետի և Պալատի կանոնադրության 4.4 կետի պահանջների խախտում:

Կարգապահական տույժի տեսակն ընտրելիս, Պալատի խորհուրդը հաշվի է առնում այն հանգամանքը, որ՝ Սուրիկ Ղազարյանը (արտոնագիր թիվ 99) չունի կարգապահական տույժ, Վարսիկ Ավետիսյանը (արտոնագիր թիվ 315) ունի կարգապահական տույժ՝ մեկ խիստ նկատողություն, Գոհար Զուրաբյանը (արտոնագիր թիվ 665) ունի մի քանի կարգապահական տույժեր՝ նկատողություն և խիստ նկատողություններ, Արարատ Թամրազյանը (արտոնագիր թիվ 816) ունի կարգապահական տույժեր՝ նկատողություն և խիստ նկատողություններ, Ռոբերտ Ավետիսյանը (արտոնագիր թիվ 1306) ունի կարգապահական տույժ՝ նկատողություն,, Հովհաննես Մաթևոսյանը (արտոնագիր թիվ 1055) ունի կարգապահական տույժ՝ նկատողություն:

Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 39.9 հոդվածի համաձայն՝

1. Փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ տույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

2. Փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի խորհուրդը կարող է նշանակել միայն դիտավորությամբ կատարված ակնհայտ կոպիտ կարգապահական խախտման դեպքում:*

Նկատի ունենալով, որ փաստաբաններ Գոհար Զուրաբյանը (արտոնագիր թիվ 665) ունի մի քանի կարգապահական տույժեր՝ նկատողություն և խիստ նկատողություններ, Արարատ Թամրազյանը (արտոնագիր թիվ 816) ունի մի քանի կարգապահական տույժեր՝ նկատողություն և խիստ նկատողություններ, լստի Պալատի խորհուրդը գտնում է, որ նրանց կողմից դիտավորությամբ կատարվել է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում, որը կրում է պարբերական բնույթ և հիմք է հանդիսանում վերը նշված փաստաբանների արտոնագրերի գործողությունները դադարեցնելու համար:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.7-րդ և 39.9-րդ հոդվածներով, Պալատի խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

1. Գոհար Զուրաբյանի (արտոնագիր թիվ 665) և Արարատ Թամրազյանի (արտոնագիր թիվ 816) արտոնագրերի գործողությունները դադարեցնել:

2. Փաստաբաններ՝ Տաթևիկ Ղուկասյանի (արտոնագիր թիվ 1473), Գրիգոր Պողոսյանի (արտոնագիր թիվ 1525), Հովհաննես Պետրոսյանի (արտոնագիր թիվ 1354), Վարդան Ստեփանյանի (արտոնագիր թիվ 964), Վաչե Դավթյանի (արտոնագիր թիվ 951), Տիգրան Սաֆարյանի (արտոնագիր թիվ 769) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել, մինչև սույն որոշումը կայացնելու դրությամբ մինչև 2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունեցած անդամավճարի պարտքը ամբողջությամբ մուծած լինելու հիմքով:

3. Փաստաբաններ՝ Գրետա Ռամազյանի (արտոնագիր թիվ 370), Վարդան Սուդյանի (արտոնագիր թիվ 1098), Վահե Դալալյանի (արտոնագիր թիվ 1183) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել, մինչև սույն որոշումը կայացնելու դրությամբ մինչև 2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունեցած պարտքի գումարը մասնակի մարելու և 15.000 դրամից պակաս լինելու հիմքով:

4. Փաստաբաններ՝ Սյուզաննա Մալխասյանի (արտոնագիր թիվ 746), Նելլի Կիրակոսյանի (արտոնագիր թիվ 787), Լիաննա Գրիգորյանի (արտոնագիր թիվ 892), Սուրիկ Բախշիկի Ղազարյանի (արտոնագիր թիվ 99), Վարսիկ Ավետիսյանի (արտոնագիր թիվ 315) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

5. Փաստաբաններ՝ Ռոբերտ Ավետիսյանի (արտոնագիր թիվ 1306), Հռիփսիմե Մաթևոսյանի (արտոնագիր թիվ 1055) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

6. Փաստաբաններ Կարեն Ղազարյանի (արտոնագիր թիվ 1358), Հրաչյա Պալյանի (արտոնագիր թիվ 762), Վլադիմիր Հայրապետյանի (արտոնագիր թիվ 106), Ենոք Հարությունյանի (արտոնագիր թիվ 559), Հրայր Քիշմիրյանի (արտոնագիր թիվ 946), Արամ Ճուղուրյանի (արտոնագիր թիվ 960), Սաթենիկ Մանուկյանի

(արտոնագիր թիվ 145) մասով հարուցված կարգապահական վարույթը հետաձգել և նիստի օր նշանակել սեպտեմբերի 27-ին ժամը 18:00-ին՝ վերջիններիս կրկին անգամ ծանուցել նիստի օրի և ժամի մասին:

7. Որոշումը տույժի ենթարկված փաստաբաններին ուղարկել այն հրապարակելուց հետո՝ քսան օրվա ընթացքում, փոստով և էլեկտրոնային փոստով, որպիսի պահանջի կատարման պարտականությունը դնել Պալատի աշխատակազմի ղեկավարի վրա:

8. Որոշումը տեղադրել Պալատի կայքէջում:

9. Փաստաբաններին պարգաբանել, որ սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում և այդ ժամկետում որոշման բողոքարկումը կասեցնում է դրա օրինական ուժի մեջ մտնելը.

10. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դրա բողոքարկման ժամկետն անցնելուց հետո և ենթակա է ի կատար ածման՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Նիստը նախագահող
Պալատի խորհրդի անդամ՝

Լիպարիտ Սիմոնյան